# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԽՈՍՔԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Հանրապետության տոնի առիթով, երբ նշում ենք Հայաստանի Հանրապետության հռչակման 90-ամյա տարեդարձը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ողջույն ենք հղում և Հայրապետական Մեր օրհնությունը բերում սիրեցյալ մեր ժողովրդին ի Հայաստան, յԱրցախ և ի Սփյուռս:

Հայոց պետականության վերականգնումը 1918 թ. Մայիսյան հերոսամարտերի օրերին իրադարձություն էր մեր ժողովրդի համար, փրկված Հայրենիք, որին դժվարին ժամանակում ազգս հայոց նվիրաբերեց իր բոլոր ուժերը՝ սկզբնավորելով իր ազգային-պետական կյանքը: Այդ օրերի հիշատակներն ու ձեռքբերումները ոգեշնչում և քաջալերում են մեզ մեր հայրենանվիրումի, մեր եկեղեցասիրության մեջ՝ որդիական նույն սիրով ծառայելու մեր Հայրենիքին, մեր ժողովրդի լուսավոր գալիքին:

Հայցում ենք Բարձրյալից, որ խաղաղ պահպանի մեր Հայրենիքը, և օրհնի մեր ժողովրդի ազնիվ ջանքն ու նվիրումը՝ հանուն Հայաստանի և Արցախի բարգավաճման և աշխարհասփյուռ մեր զավակների բարօր ու երջանիկ կյանքի և արդար հույսերի մարմնավորման:

Թող շնորհն ու խաղաղությունն Աստծո լինեն մեզ հետ և բոլորի, այսօր և միշտ. Ամեն:

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին
28 մայիսի 2008թ.

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՍՐԲԱՏԱՌ ԿՈՆԴԱԿԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ